



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՅՈԹԵՐՈՐՊ ՏԱՐԻ 26(446) «12» հոկտեմբերի 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ		
549	««Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-100-Ն օրենքը...	3
550	««Քրեական օրենսգրքում» փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-101-Ն օրենքը.....	4
551	««Զենքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-102-Ն օրենքը.....	6
552	««Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-103-Ն օրենքը.....	7
553	««Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-104-Ն օրենքը.....	8
554	««Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-105-Ն օրենքը.....	12
555	««Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին» կոնվենցիան վավերացնելու մասին» ԱՀ ՀՕ-106-Ն օրենքը.	14
ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ		
556	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-107-Ն հրամանագրում լրացումներ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-3189-Ն հրամանագիրը....	15
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
557	«Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1062-Ն որոշումը.....	16
558	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 27-ի N 714-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1068-Ն որոշումը.....	18
559	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 14-ի N 617-Ն որոշման մեջ փոփոխություններ	

	կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1079-Ն որոշումը.....	24
560	«Արցախի Հանրապետության տարածքում բնակչության բնակեցման և տնտեսական գործունեության վարման ապահովմանն ուղղված վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու և վերացնելու հատուկ պայմանները և ռեժիմը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 1096-Ն որոշումը.....	26
ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
	ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ, ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ ՕՐԵՆՔԻՆ ԿԱՍ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊԲԵՐՈՒՄ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻՆ ՀԱԿԱՍՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՍ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍՈՎ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ՝ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
561	«Դատարանների նախագահների խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 20-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ դատարանների նախագահների խորհրդի N 2-Ն որոշումը.....	35

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
սեպտեմբերի 29-ին

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Քաղաքացիական պաշտպանության մասին» 2004 թվականի մարտի 10-ի ՀՕ-101 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ.1» կետով.

«դ.1) պահեստային կառավարման կետերի բացազատման վայրերի (բացառությամբ Արցախի Հանրապետության զինված ուժերի պահեստային կառավարման կետերի) և դրանց ներկայացվող պահանջների սահմանումը և աշխատանքների կազմակերպումը.»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «Քաղաքացիական պաշտպանության բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) ղեկավարը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարն» բառերով.

2) 4-րդ մասում «Լիազորված մարմնի» բառերը փոխարինել «Քաղաքացիական պաշտպանության բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին)» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
Ստեփանակերտ
ՀՕ-100-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
սեպտեմբերի 29-ին

«ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի ապրիլի 25-ի Քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 23-րդ հոդվածի 2-րդ մասում «ավտոմեքենային» բառը փոխարինել «ավտոմոբիլին» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 189-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «Ավտոմեքենային» բառը փոխարինել «Ավտոմոբիլին» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 253-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 253. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը».

2) 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ավտոմոբիլի կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝»:

Հոդված 4. Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած վարորդի կողմից սույն օրենսգրքի 253-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման դեպքում՝»:

Հոդված 5. Օրենսգրքի 258-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «ապահովող» բառից հետո լրացնել «պահանջները կամ» բառերը.

2) 1-ին մասի առաջին պարբերությունում «տրանսպորտի երթևեկության անվտանգության կամ» բառերը փոխարինել «ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
Ստեփանակերտ
ՀՕ-101-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
սեպտեմբերի 29-ին

**«ԶԵՆՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Զենքի մասին» 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-41 օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետում «ոստիկանության պետը» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
Ստեփանակերտ
ՀՕ-102-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
սեպտեմբերի 29-ին

**«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» 2003 թվականի նոյեմբերի 26-ի ՀՕ-78 օրենքի 19-րդ հոդվածի 6.1-ին մասում «ոստիկանության» բառից հետո լրացնել «արտակարգ իրավիճակների պետական ծառայության» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
Ստեփանակերտ
ՀՕ-103-Ն

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
սեպտեմբերի 29-ին

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային անվտանգության մարմինների մասին» 2003 թվականի նոյեմբերի 26-ի ՀՕ-75 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի երկրորդ մասից հանել «և քննչական» բառերը:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 4.2-րդ հոդվածը:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածում 1-ին մասի՝

1) 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26) բացահայտում, կանխում և խափանում են օրենքով նախատեսված իրենց լիազորությունների կատարման ընթացքում հայտնի դարձած հանցագործությունները, իրականացնում են այդ հանցագործությունները կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետախուզումը.»

2) 60-րդ կետից հանել «այդ մարմիններին աջակցող անձանց ազգային անվտանգության մարմինների քննչական ենթակայությանը վերապահված գործերով քրեական դատավարության մասնակիցների,» բառերը:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 17. Մարտական տեխնիկա գործադրելու կարգը, զենք, հատուկ միջոցներ և ֆիզիկական ուժ գործադրելու իրավունքը, հիմքերը, պայմանները և սահմանները

Ազգային անվտանգության մարմինների աշխատակիցները սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրավունք ունեն գործադրել զենք, հատուկ միջոցներ և ֆիզիկական ուժ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իրենց պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել:

Ազգային անվտանգության մարմինների աշխատակիցների կողմից մարտական տեխնիկա գործադրելու կարգը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Ազգային անվտանգության մարմինների աշխատակիցը զենք, հատուկ միջոցներ և ֆիզիկական ուժ գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ և հնարավորություն տրամադրելով օրինական պահանջները կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ազգային անվտանգության մարմինների աշխատակցի կյանքի ու առողջության համար, կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

Զենքի, հատուկ միջոցների և ֆիզիկական ուժի գործադրման ընտրությունը կատարելիս ազգային անվտանգության մարմինների աշխատակիցն

առաջնորդվում է էլնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:

Ազգային անվտանգության մարմինների աշխատակիցը պարտավոր է նաև՝

1) ձգտել, որ իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի:

2) ցուցաբերել առաջին բուժօգնություն, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել մարմնական վնասվածքներ ստացած անձանց անհապաղ բժշկական հիմնարկներ տեղափոխելու համար:

3) զենք, հատուկ միջոցներ, ֆիզիկական ուժ գործադրելու հետևանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի, ինչպես նաև հատուկ միջոցներ և զենք կիրառելու յուրաքանչյուր դեպքի մասին զեկուցել անմիջական ղեկավարին:

Անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում, ինչպես նաև հանցագործություն կատարած անձի ձերբակալման ժամանակ ազգային անվտանգության մարմինների աշխատակիցը զենքի կամ անհրաժեշտ հատուկ միջոցների բացակայության դեպքում իրավունք ունի օգտագործել ցանկացած մատչելի միջոց, ինչպես նաև սույն օրենքով սահմանված հիմքերով և կարգով օգտագործել այլ զենքեր, որոնք ընդգրկված չեն ազգային անվտանգության ծառայության սպառազինության մեջ:

Օրենքով չնախատեսված դեպքերում ազգային անվտանգության մարմինների աշխատակցի կողմից զենքի, հատուկ միջոցների և ֆիզիկական ուժի գործադրումը կամ սահմանների անցումով դրանց գործադրումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-ին հոդվածով.

«Հոդված 17.1. Զենքի և հատուկ միջոցների գործադրումը

Ազգային անվտանգության մարմինների աշխատակիցն անձամբ կամ ստորաբաժանման կազմում իրավունք ունի զենք և հատուկ միջոցներ գործադրել՝

1) քաղաքացիներին՝ նրանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակումներից պաշտպանելիս:

2) ազգային անվտանգության մարմինների աշխատակցի վրա կատարվող հարձակումը հետ մղելիս, երբ նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում:

3) իր զենքին, տրանսպորտային միջոցին և մարտական տեխնիկային տիրանալու փորձերը կանխելիս:

4) պատանդներին ազատելիս, ինչպես նաև ահաբեկչական և այլ հանցավոր ռոնձգործուններ կանխելիս:

5) կյանքի, առողջության, սեփականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու կասկածանքով ձերբակալված և փախուստի փորձ կատարող անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս, ինչպես նաև նրանց բռնի ազատման փորձը կանխելիս:

6) զինված դիմադրություն ցույց տվող, ինչպես նաև այն անձանց ձերբակալելիս, որոնք հրաժարվում են կատարել իրենց մոտ եղած զենքը, զինամթերքը, պայթուցիկ նյութերը, պայթուցիկ սարքերը, թունավոր կամ ռադիոակտիվ նյութերը հանձնելու ազգային անվտանգության մարմինների աշխատակցի օրինական պահանջը:

7) պետական մարմինների, պետական պահպանության ենթակա օբյեկտների, ինչպես նաև ուղեկցող ստորաբաժանումների վրա խմբակային կամ զինված հարձակումը հետ մղելիս:

8) կյանքի, առողջության, սեփականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման կասկածանքով ձերբակալված, կալանքի կամ ազատագրկման վայրերից փախուստի դիմած անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս:

Ազգային անվտանգության մարմինների աշխատակիցներն իրավունք ունեն գենք և հատուկ միջոցներ օգտագործել՝

1) մարդկանց կյանքին և առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասագերծելիս.

2) կողպված սարքերի տարրերի ոչնչացման համար, որոնք խոչընդոտում են բնակելի և այլ տարածքներ ներթափանցումը օրենքով սահմանված կարգով և դեպքերում.

3) գենք օգտագործելու կամ գործադրելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տազնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

Արգելվում է գենքի գործադրումը կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման և զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաև մարդկանց զգալի կուտակումների ժամանակ, երբ գենքի գործադրումից կարող են տուժել այլ անձինք, բացառությամբ ահաբեկչությունը կանխելիս և պատանդներին ազատելիս:

Արգելվում է հատուկ միջոցներ գործադրել կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանը սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների տարածքներում (բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցները գործադրվում են դրանց լիազոր ներկայացուցիչների խնդրանքով):

Զենքի, ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցների կիրառման յուրաքանչյուր դեպքի մասին, որի արդյունքում վնաս է հասցվել քաղաքացու առողջությանը կամ նյութական վնաս է հասցվել քաղաքացուն կամ կազմակերպությանը, ազգային անվտանգության մարմնի աշխատակիցները պարտավոր են զեկուցել իրենց անմիջական ղեկավարին ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.2-րդ հոդվածով.

«Հոդված 17.2. Ֆիզիկական ուժի գործադրումը

Իրավախախտումները կանխելու կամ խափանելու, իրավախախտներին բռնելու և ազգային անվտանգության մարմիններ ներկայացնելու, ազգային անվտանգության մարմինների աշխատակցի օրինական պահանջներին չենթարկվելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաև ինքնապաշտպանության նպատակով ազգային անվտանգության մարմինների աշխատակիցն իրավունք ունի իրավախախտների նկատմամբ գործադրել ֆիզիկական ուժ, ինչպես նաև ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում ազգային անվտանգության մարմինների աշխատակցի վրա դրված պարտականությունների կատարումը:»:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.3-րդ հոդվածով.

«Հոդված 17.3. Ազգային անվտանգության մարմինների զինված

աշխատակցի անձնական անվտանգության երաշխիքները

Ազգային անվտանգության մարմինների զինված աշխատակիցն իրավունք ունի մերկացնել և մարտական վիճակի բերել զենքը, եթե գտնում է, որ ստեղծված իրադրությունում կարող է սույն օրենքով սահմանված դեպքերում զենքի գործադրման անհրաժեշտություն առաջանալ:

Մերկացրած զենքով ձեռքարկելու կատարող ազգային անվտանգության մարմինների աշխատակցին մոտենալու (նրա կողմից պահանջված հեռավորությունը խախտելու միջոցով), առանց թույլտվության անսպասելի կտրուկ շարժում կատարելու, ձեռքերը գրպանները տանելու կամ զենքին ձեռք մեկնելու՝ ձեռքարկվողի ցանկացած փորձ աշխատակցին իրավունք է տալիս առանց նախազգուշացման զենք գործադրել սույն օրենքին համապատասխան:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
Ստեփանակերտ
ՀՕ-104-Ն

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
սեպտեմբերի 29-ին

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նոտարիատի մասին» 2005 թվականի մարտի 23-ի ՀՕ-184 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նոտարն իր գործունեությունն իրականացնում է պետական նոտարական գրասենյակում (այսուհետ՝ նոտարական գրասենյակ):

Նոտարական գրասենյակները գործում են Արցախի Հանրապետության տարածքում՝ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ արդարադատության նախարարություն) համակարգում:

Նոտարական գրասենյակներին առաջադրվող նվազագույն պահանջները և գտնվելու վայրերը սահմանում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարը (այսուհետ՝ արդարադատության նախարար)՝ քաղաքացիների հարմարավետության, հերթերի կառավարման, անվտանգության ապահովման և ժամանակի արդյունավետության սկզբունքների հիման վրա:

Մեկ նոտարական գրասենյակում կարող են աշխատել մեկ կամ մի քանի նոտարներ:

Նոտարական գործողություններ կատարելու համար նոտարին կարող է դիմել ցանկացած անձ, անկախ նրա բնակության կամ գտնվելու վայրից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:».

2) 2-րդ մասի առաջին պարբերությունից հանել «՝ նոտարական տարածքում» բառերը:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում «տարածք» կրկնվող բառը փոխարինել «գրասենյակ» բառով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նոտարական գրասենյակին արդարադատության նախարարությունը տալիս է Արցախի Հանրապետության պետական զինանշանի պատկերով կնիք, որի վրա հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով նշված են «Արցախի Հանրապետություն» բառերը, նոտարի անունը, ազգանունը և նոտարական գրասենյակի անվանումը:»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նոտարական գրասենյակում նոտարի ժամանակավոր բացակայության, ինչպես նաև սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով պաշտոնից ազատման կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքերում արդարադատության նախարարն այդ նոտարի լիազորությունների իրականացումը նոտարի ժամանակավոր բացակայության ժամանակահատվածում, իսկ պաշտոնից ազատման կամ լիազորությունների դադարման դեպքում՝ անժամկետ, կարող է դնել այլ

նոտարական գրասենյակի նոտարի վրա: Այս դեպքում նոտարն իրավունք ունի իր գործունեությունն իրականացնել կամ իր նոտարական գրասենյակի, կամ փոխարինվող նոտարի նոտարական գրասենյակի միջոցով:».

2) 2-րդ մասում «տարածքում» բառը փոխարինել «գրասենյակում» բառով.

3) 5-րդ մասում «տարածք» բառը փոխարինել «գրասենյակ» բառով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Արցախի Հանրապետությունից տեղահանված անձանց համար նոտարական գործողություններ կատարելու կամ այլ ծառայություններ մատուցելու նպատակով նոտարը կարող է ժամանակավորապես գործուղվել Հայաստանի Հանրապետություն:»:

Հոդված 5. Օրենքի 27.1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «տարածքը» բառը փոխարինել «գրասենյակի անվանումը» բառերով:

Հոդված 6. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասում «տարածքը» բառը փոխարինել «գրասենյակի անվանումը» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
Ստեփանակերտ
ՀՕ-105-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
սեպտեմբերի 29-ին

**«ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Վավերացնել Մոնտեվիդեո քաղաքում 1933 թվականին ստորագրված «Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին» կոնվենցիան:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
Ստեփանակերտ
ՀՕ-106-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-107-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի սահմանումից բխող մի շարք միջոցառումների մասին» ՆՀ-107-Ն հրամանագրի (այսուհետ՝ հրամանագիր) 5-րդ կետով հաստատված՝

1) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կանոնադրությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ 53.1-ին կետ.

«53.1. Ռուսաց լեզվի զարգացման հարցերի բաժինը՝

1) իրականացնում է Արցախի Հանրապետությունում ռուսաց լեզվի զարգացման հարցերի համակարգային լուծման աշխատանքներ.

2) մշակում է տեղեկատվական, կրթական և հումանիտար բնագավառներում ռուսաց լեզվի միջավայրի պահպանման միջոցառումների արդյունավետ համակարգեր, օժանդակում դրանց զարգացմանը.

3) իրականացնում է լեզվական և կրթական նախաձեռնություններ, աջակցում դրանց իրագործմանը.

4) ապահովում է համագործակցությունը ռուսաց լեզվի խթանման և աջակցության ոլորտում գործունեություն ծավալող Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համապատասխան կառույցների հետ, համակարգում համատեղ միջոցառումների կազմակերպման աշխատանքները.

5) համագործակցում է ոլորտային պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ՝ ռուսաց լեզվի դասավանդման որակի, որակավորված մասնագետների պատրաստման, միջմշակութային համագործակցության, լեզվական անվտանգության և մարդու իրավունքների պաշտպանության հարցերով:».

2) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառուցվածքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1-ին կետ.

«25.1. Ռուսաց լեզվի զարգացման հարցերի բաժին»:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 12
Ստեփանակերտ
ՆՀ-3189-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 հոկտեմբերի 2021թ.

N 1062-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի
N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ այդ թվում՝	-	-	-	-
07			ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	-	-	(24981,4)	(24981,4)
	1		Բժշկական սպրանքներ, սարքեր և սարքավորումներ	-	-	(24981,4)	(24981,4)
		3	Բժշկական սարքեր և սարքավորումներ	-	-	(24981,4)	(24981,4)
		01	Կենտրոնացված կարգով բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում	-	-	(24981,4)	(24981,4)
			ԱՀ առողջապահության նախարարություն			(24981,4)	(24981,4)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՄՎՈՂ ԾԱՌՄԵՐ	-	-	24981,4	24981,4
	11		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդ	-	-	24981,4	24981,4
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	24981,4	24981,4
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	24981,4	24981,4
			ԱՀ կառավարություն	-	-	24981,4	24981,4

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 հոկտեմբերի 2021թ.

N 1068-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 714-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 27-ի «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը հաստատելու մասին» N 714-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԲԺՇԿԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՄՈՏ ԲՆԱԿՇՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԲԺՇԿԻ ՄՈՏ ԳՐԱՆՑՎՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ, ՕՊՏԻՄԱԼ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշմամբ հաստատված N 1 և N 2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՍՈՒՑՈՂ ԲԺՇԿԻ ԸՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՄՈՏ ԲՆԱԿՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑՑՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են առողջության առաջնային պահպանման (այսուհետ՝ ԱԱՊ) ծառայություններ մատուցող բժշկի ընտրության, նրա մոտ բնակչության գրանցման, ինչպես նաև ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկին (այսուհետ՝ ԱԱՊ բժիշկ) փոխելու հետ կապված հարաբերությունները:

2. ԱԱՊ բժշկի ընտրության և նրա մոտ բնակչի գրանցման նպատակը բնակչի կողմից ԱԱՊ բժշկի կամավոր ընտրությունը, առաջնային բուժօգնության օղակին հատկացվող ռեսուրսների արդյունավետ բաշխումը, իրականացվող ծառայությունների ծավալի ընդլայնումը և որակի բարելավումը՝ բնակչության կողմից ԱԱՊ բժշկի կամավոր ընտրության մրցակցային միջավայրում ապահովելն է:

3. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) ԱԱՊ բժիշկ՝ բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնելու լիցենզիա և դրա հիման վրա բժշկական ընդհանուր պրակտիկա, մանկաբուժական ընդհանուր պրակտիկա (ներառյալ՝ առաջնային բուժօրյակական օգնությունը, որը նաև տրամադրվում է տվյալ առողջապահական կազմակերպության կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետի (կետերի) բուժքրոջ միջոցով), բժշկական օգնության և սպասարկման տեսակներից որևէ մեկը կամ մի քանիսն իրականացնելու իրավունք ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող առողջապահական կազմակերպությունում ԱԱՊ ծառայություն մատուցող տեղամասային թերապևտ կամ տեղամասային մանկաբույժ:

2) բնակչի կողմից ԱԱՊ բժշկի կամավոր ընտրություն՝ ընտրություն, որը կատարում է բնակիչն իր կամքով և ԱԱՊ բժշկի մասին իր ունեցած տեղեկատվության հիման վրա՝ համաձայն սույն կարգով սահմանված ընթացակարգի:

3) ԱԱՊ բժշկի մոտ բնակչի գրանցում (այսուհետ՝ գրանցում)՝ սույն կարգով սահմանված ընթացակարգով բնակչի կողմից ԱԱՊ բժշկի կամավոր ընտրության հիման վրա կատարվող փաստաթղթային և էլեկտրոնային ձևակերպումները, որի հիման վրա ԱԱՊ բժիշկը բնակչին մատուցում է պետության կողմից սահմանված ծավալներով որոշված ԱԱՊ ծառայություններ, կազմակերպում առաջնային բուժօգնության այլ ծառայություններ և ստանում համապատասխան ֆինանսավորում:

4) ԱԱՊ բժշկի մոտ բնակչության գրանցման տվյալների ավտոմատացված բազա՝ ԱԱՊ բժշկի մոտ բնակչության գրանցման ձևով (այսուհետ՝ գրանցման ձև) գրանցվող բնակչի վերաբերյալ հավաքված և էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրված տվյալների ամբողջություն:

5) ԱԱՊ ծառայություններ մատուցող բուժհաստատություն (այսուհետ՝ ԱԱՊ հաստատություն)՝ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր հանդիսացող առողջապահական կազմակերպություն (ներառյալ՝ այդ առողջապահական կազմակերպության կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետեր), որոնք ունեն բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնելու լիցենզիա և դրա հիման վրա իրավունք ունեն իրականացնելու բժշկական օգնության և սպասարկման հետևյալ տեսակներից որևէ մեկը կամ մի քանիսը՝ բժշկական ընդհանուր պրակտիկա, մանկաբուժական ընդհանուր պրակտիկա, ներառյալ՝ առաջնային բուժօրյակական օգնությունը, որը նաև տրամադրվում է այդ առողջապահական կազմակերպության կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետի (կետերի) բուժքրոջ միջոցով, մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա:

6) սույն կարգի իմաստով «բնակիչ» են համարվում Արցախի Հանրապետության քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա քաղաքացիները,

փախստականի և ապաստան հայցողի կարգավիճակ ունեցող անձինք, ովքեր բնակվում են Արցախի Հանրապետությունում.

7) չգրանցված բնակչության բազա (ՉԲԲ)՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում ձևավորված բազա՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան պետության կողմից երաշխավորված անվճար ԱԱՊ ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բնակիչների վերաբերյալ տվյալների ամբողջություն, որի վարման ընթացակարգը հաստատում է առողջապահության նախարարը.

8) Արցախի Հանրապետությունում գրանցված բնակչության բազա (ԱՀԳԲԲ)՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում ձևավորված բազա՝ Արցախի Հանրապետության տարածքում գործող առաջնային օղակի բուժհաստատություններում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման համար հավաքագրված բնակիչների վերաբերյալ տվյալների ամբողջություն.

9) վիճելի դեպքերի կարգավորման պատուհան (ՎԴԿՊ)՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի ենթաբաժին, որի միջոցով կարգավորվում են բնակչի կողմից այլ բժշկական կազմակերպության ԱԱՊ բժշկի ընտրության փոփոխության ընթացքում առաջացած վեճերը.

10) ժամանակավոր կցագրում՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ արտակարգ դրությունում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց կցագրում:

4. Տեղամասային թերապևտի մոտ գրանցվում են 18 և ավելի տարիք ունեցող բնակիչները, իսկ տեղամասային մանկաբուժի մոտ՝ մինչև 18 տարեկան երեխաները:

5. Երեխաների համար ԱԱՊ բժշկի ընտրությունը և նրա մոտ գրանցումն իրականացնում է երեխայի օրինական ներկայացուցիչը:

2. ԲՆԱԿՉԻ ԿՈՂՄԻՑ ԱԱՊ ԲԺՇԿԻ ԿԱՍՏՎՈՐ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

6. Արցախի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում փախստականի և ապաստան հայցողի կարգավիճակ ունեցող յուրաքանչյուր անձ պետական պատվերի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար ԱԱՊ ծառայություններ է ստանում միայն այն ԱԱՊ բժշկի մոտ, որին ինքը կընտրի կամավոր՝ սույն կարգի համաձայն, և որի մոտ կգրանցվի՝ ըստ սույն կարգով սահմանված ընթացակարգի:

7. Արցախի Հանրապետությունում բնակվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք կարող են ընտրել ԱԱՊ բժիշկ՝ սույն կարգով սահմանված ընթացակարգով, գրանցվել նրա մոտ և վճարովի հիմունքներով, ըստ բժշկական հաստատության կողմից սահմանված գնացուցակի, օգտվել ԱԱՊ և առաջնային բուժօգնության այլ ծառայություններից:

8. Յուրաքանչյուր բնակիչ, անկախ Արցախի Հանրապետությունում իր հաշվառման վայրից, իրավունք ունի ընտրելու իր մշտական բնակության վայրի վարչատարածքային միավորի սահմաններում, իսկ Ստեփանակերտ քաղաքի դեպքում՝ քաղաքի վարչական սահմաններում գործող ցանկացած ԱԱՊ հաստատությունում աշխատող ԱԱՊ բժիշկ: ԱԱՊ բժիշկը որպես բնակիչ չի կարող ընտրել ինքն իրեն և գրանցվել ինքն իր մոտ որպես ԱԱՊ բժիշկ:

9. ԱԱՊ բժիշկը չի գրանցում իրեն ընտրած և գրանցվելու նպատակով դիմող բնակչին, եթե՝

1) լրացել են ԱԱՊ բժշկի կողմից սպասարկվող բնակիչների առավելագույն թույլատրելի թվաքանակները (բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ տարածաշրջանում առկա չէ այլ ընտրանք).

2) բնակչի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին.

3) ԱԱՊ հաստատության և բնակչի մշտական բնակության վայրի միջև եղած հեռավորության պատճառով (15 կմ գերազանցելու դեպքում) ԱԱՊ բժիշկը չի կարող մատուցել բժշկական օգնության հետևյալ ծառայությունները՝ տնային այցելություններ և հակահամաճարակային հսկողություն:

10. Արցախի Հանրապետության քաղաքացին իր կողմից ընտրված ԱԱՊ բժշկի մոտ գրանցվելու համար ներկայացնում է իր անձնագիրը, հանրային

ծառայությունների համարանիշը կամ սոցիալական քարտը կամ նույնականացման քարտը, իսկ մինչև 16 տարեկան երեխայի համար՝ անձը հաստատող փաստաթուղթը, հանրային ծառայությունների համարանիշը կամ սոցիալական քարտը: Առանձին (հատուկ) խմբին պատկանելու դեպքում ներկայացվում է նաև այդ փաստը հավաստող փաստաթուղթը: Արցախի Հանրապետությունում բնակվող օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք իրենց կողմից ընտրված ԱԱՊ բժշկի մոտ գրանցվելու համար ներկայացնում են անձը հաստատող փաստաթուղթը:

11. Գրանցումն իրականացնող ԱԱՊ բժիշկը կամ բուժքույրն էլեկտրոնային առողջապահության համակարգում այդ փաստաթղթերի հիման վրա լրացնում է դիմող բնակչի անձնական տվյալները, արտահանում ծրագրից և ներկայացնում բնակչին ստորագրման:

12. Բնակիչն իր անձնական տվյալների փոփոխության դեպքում դրանց մասին երկշաբաթյա ժամկետում տեղեկացնում է իր ԱԱՊ բժշկին, ում մոտ գրանցված է: ԱԱՊ բժիշկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ապահովել այդ փոփոխության կատարումը բուժհաստատության ավտոմատացված բազայում: ԱԱՊ բժիշկը կարող է գրանցել իրեն ընտրած բնակչին ԱԱՊ հաստատությունում (բնակչի այցելության ժամանակ) կամ կանխարգելիչ, վերականգնողական, բուժական միջոցառումներ իրականացնելու նպատակով նրա հաշվառման, մշտական բնակության կամ այլ վայր կատարած այցի ընթացքում:

13. Չգրանցված բնակչության բազայում գրանցվում են հետևյալ անձինք՝

1) այն երեխան, որի ծնողներից մեկը Արցախի Հանրապետության քաղաքացի է, իսկ երեխան այլ երկրի քաղաքացի:

2) Արցախի Հանրապետությունում խաղաղապահական առաքելություն իրականացնող ռուս զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների:

3) փախստականի, ապաստան հայցողի և հատուկ կացության կարգավիճակ ունեցող անձինք, ովքեր բնակվում են Արցախի Հանրապետությունում:

4) Սիրիայի Արաբական Հանրապետության ազգությամբ հայ քաղաքացիները, ովքեր մշտապես բնակվում են Արցախի Հանրապետությունում:

14. Չգրանցված բնակչության բազայում գրանցվելու համար սահմանված կարգով ներկայացվում են բնակչի անձնական տվյալներ՝ կցելով անձը հաստատող փաստաթղթի և սույն կարգի 13-րդ կետով նախատեսված՝ անձի համապատասխան կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճենը:

15. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությունը կազմակերպում է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց ժամանակավոր կցագրումը էլեկտրոնային առողջապահական համակարգում՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից ընտրված ԱԱՊ հաստատությունում, ինչպես նաև հաստատում է ժամանակավոր կցագրումից դուրս գալու և հետագա հավաքագրման ընթացակարգը:

3. ԱԱՊ ԲԺՇԿԻ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԵՆ ԸՆՏՐԱԾ ԲՆԱԿՉԻՆ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

16. ԱԱՊ բժիշկն իրեն ընտրած բնակչին գրանցելիս ստանում է բնակչի համաձայնությունը անձնական տվյալները մշակելու համար:

17. ԱԱՊ նոր հաստատություն ընտրելիս նոր ընտրված ԱԱՊ հաստատությունը էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով սահմանված կարգով ապակցման հայց է ներկայացնում նախկին ԱԱՊ հաստատություն: Հայցը նախկին ԱԱՊ հաստատության կողմից չբավարարվելու դեպքում նոր ընտրված ԱԱՊ հաստատությունը էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով սահմանված կարգով հայց է ներկայացնում ՎՂԿՊ:

18. ԱԱՊ հաստատությունը փոխելու և նոր ԱԱՊ հաստատությունում աշխատող ԱԱՊ բժշկի մոտ գրանցվելու դեպքում բնակչի բժշկական քարտը պահվում է նախկին ԱԱՊ հաստատությունում, իսկ նոր ԱԱՊ հաստատությունում գործող ԱԱՊ բժշկին էլեկտրոնային եղանակով ներկայացվում է բժշկական քարտի տվյալների քաղվածք նախկին ԱԱՊ հաստատությունից:

19. Գրանցման գործընթացին մասնակցող բուժաշխատողներն ապահովում և պահպանում են գրանցվող բնակչի վերաբերյալ անձնական տվյալների և տեղեկատվության գաղտնիությունը:

4. ԲՆԱԿԻՅԻ ԿՈՂՄԻՑ ԱՍՊ ԲԺՇԿԻՆ ՓՈԽԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒ

20. Բնակիչն իրավունք ունի փոխելու իր ԱԱՊ բժշկին և ընտրելու նոր ԱԱՊ բժիշկ՝ նույն կամ այլ ԱԱՊ հաստատությունում: Բնակիչը նաև կարող է որոշում ընդունել և՝

1) փոխել իր ԱԱՊ բժշկին կամ համաձայնություն տալ ժամանակավորապես սպասարկվել ԱԱՊ հաստատության ղեկավարի հրամանով իր ԱԱՊ բժշկին փոխարինող այլ ԱԱՊ բժշկի կողմից, եթե իր ԱԱՊ բժիշկը, անկախ պատճառներից, չի կարող սպասարկել իրեն 40 և ավելի օրացուցային օր:

2) փոխել իր ԱԱՊ բժշկին ու ընտրել նոր ԱԱՊ բժիշկ տվյալ կամ այլ ԱԱՊ հաստատությունում իր ԱԱՊ բժշկի մահվան, այլ ԱԱՊ հաստատություն տեղափոխվելու, կենսաթոշակի անցնելու և օրենքով սահմանված այն դեպքերում, երբ ԱԱՊ բժիշկը չի կարող աշխատել իր մասնագիտությամբ:

21. Եթե բնակիչն ընտրել է ԱԱՊ բժիշկ, որն աշխատում է մեկ ուրիշ ԱԱՊ հաստատությունում, ապա նրա համար լրացվում է տեղափոխման ձևը:

5. ԳՐԱՆՑՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ

22. ԱԱՊ բժշկի ընտրությունը և այդ ընտրության փոփոխությունն իրականացվում են Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանված կարգով ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և այդ ընտրության փոփոխության գրանցման ձևին համապատասխան:

23. Բժշկի ընտրության փոփոխության հետ կապված ԱԱՊ բժշկական կազմակերպությունների միջև ծագած վիճելի դեպքերի կարգավորումն իրականացվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից:

24. Մինևույն ԱԱՊ հաստատության կազմում նոր ԱԱՊ բժիշկ ընտրելու և նրա մոտ գրանցվելու դեպքում տվյալ բնակչի համար լրացվում է միայն գրանցման ձևը և ներանցվում է էլեկտրոնային առողջապահության համակարգ:

25. Բնակչի տեղափոխման և նրա կողմից ընտրված նոր ԱԱՊ հաստատությունում գրանցման վերաբերյալ տեղեկատվությունը նրան սպասարկող նախկին ԱԱՊ հաստատությունում ստացվում է էլեկտրոնային ձևով՝ նոր ընտրված ԱԱՊ հաստատությունում բնակչի գրանցման փաստը հաստատվելուց և ԱԱՊ բժշկի մոտ բնակչության գրանցման տվյալների ավտոմատացված կենտրոնական շտեմարանում մուտքագրվելուց հետո:»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N2
Արցախի Հանրապետության կառավարության
2021 թվականի հոկտեմբերի 6-ի N1068-Ն որոշման

«Հավելված N2
ԼՂՀ կառավարության
«27» սեպտեմբերի 2011թ. N 714-Ն որոշման

**ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՍՆԻՑՈՂ ԲԺՇԿԻ ՄՈՏ ԳՐԱՆՑՎՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ,
ՕՊՏԻՄԱԼ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ**

Քաղաքային պոլիկլինիկաներում և բուժփավորման պոլիկլինիկական ստորաբաժանումներում սպասարկվող՝ 18 և ավելի տարիք ունեցող բնակիչների թիվը	Քաղաքային մանկական պոլիկլինիկաներում և բուժփավորումների մանկական բաժանմունքներում սպասարկվող՝ մինչև 18 տարեկան բնակիչների թիվը	Գյուղական տեղամասային հիվանդանոցների և գյուղական բժշկական ամբուլատորիաների կողմից սպասարկվող՝ 18 տարեկան և ավելի տարիք ունեցող բնակիչների թիվը	Գյուղական տեղամասային հիվանդանոցների և գյուղական բժշկական ամբուլատորիաների կողմից սպասարկվող՝ մինչև 18 տարեկան բնակիչների թիվը
նվազագույն թիվը՝ 1500	նվազագույն թիվը՝ 500	նվազագույն թիվը՝ 1500	նվազագույն թիվը՝ 500
օպտիմալ թիվը՝ 3500	օպտիմալ թիվը՝ 1500	օպտիմալ թիվը՝ 3500	օպտիմալ թիվը՝ 1500
առավելագույն թիվը՝ 4000	առավելագույն թիվը՝ 2000	առավելագույն թիվը՝ 4000	առավելագույն թիվը՝ 2000

»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

8 հոկտեմբերի 2021թ.

N 1079-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 14-Ի N 617-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 14-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 617-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի՝

1) 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«6. Պետության կողմից երաշխավորված անվճար պայմանով սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված ծավալներից, այդ թվում՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն 2 տարի և ավելի անպտղություն ունեցող (բացարձակ ցուցումների դեպքում առանց 2 տարվա սահմանափակման), նշված հիմնական պահանջներին համապատասխանող գույգերը՝

1) ամուսինները կամ ամուսիններից մեկը հանդիսանում է Արցախի Հանրապետության քաղաքացի (կամ չի հանդիսանում Արցախի Հանրապետության քաղաքացի, բայց բնակվում և աշխատում է Արցախի Հանրապետությունում) և ամուսնությունը գրանցված է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) ամուսիններից՝ կինը պատկանում է 20-51 (ներառյալ) տարիքային խմբին:».

2) Ձև N3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ձև N 3

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ
(ԵՌԱՄՍՑԱԿԱՑԻՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ)

Բուժհաստատության անվանումը _____

Բուժօգնության տեսակը	Տարիքը							
	20-30		30-38		38-42		42-51	
Անպտղության պատճառագիտության հետազոտություն ու բուժում								
Շահառուների թիվը								
	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Հղիություն								
Օնկոպերություն								
Արհեստական սերմնավորում								
Շահառուների թիվը								
	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Հղիություն								
Օնկոպերություն								
Արտամարմնային բեղմնավորում								
Շահառուների թիվը								
	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Հղիություն								
Օնկոպերություն								

Բուժհաստատության տնօրեն

.....
(ստորագրությունը)

.....
(անունը, ազգանունը)

_____ 20 թ. »:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2021թ.

N 1096-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՏՈՒՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵԺԻՄԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել Արցախի Հանրապետության տարածքում բնակչության բնակեցման և տնտեսական գործունեության վարման ապահովմանն ուղղված վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու և վերացնելու՝

1) հատուկ պայմանները՝ համաձայն հավելվածի.

2) հատուկ ռեժիմը՝ 2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև նոյեմբերի 1-ը՝

ա. կասեցնելով Ստեփանակերտ քաղաքում գործող բոլոր ուսումնական հաստատությունների գործունեությունը, բացառությամբ նախադպրոցական ուսումնական հաստատությունների,

բ. բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումն անցկացնելով հեռավար կամ առկայի հետ համակցմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵՑՄԱՆ
ԵՎ ՏՆՏԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՈՒՂԴՎԱԾ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ
ԵՎ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀՍՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. Սույն պայմաններով կարգավորվում են Արցախի Հանրապետության տարածքում բնակչության բնակեցման և տնտեսական գործունեության վարման ապահովմանն ուղղված վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ վարակիչ հիվանդություններ) տարածումը կանխելու և վերացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Վարակիչ հիվանդությունների տարածումը կանխվում և վերացվում է բնակչության բնակեցման և տնտեսական գործունեության վարման ապահովմանն ուղղված վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու և վերացնելու սույն պայմանները (այսուհետ՝ պայմաններ) պահպանելու և անհատական պաշտպանության միջոցները կիրառելու արդյունքում:

3. Սույն պայմանների մասով անհատական պաշտպանության միջոցներն են հանդիսանում շնչադիմակները, արտահագուստը, ձեռնոցները, աչքի պաշտպանության միջոցները, գոգնոցը և փակ աշխատանքային կոշիկը:

4. Սույն պայմանների պահպանումը պարտադիր է Արցախի Հանրապետության տարածքում գործող պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև նոր կորոնովիրուսային վարակի (COVID-19) դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման, իրականացման ու գնահատման գործընթացներին մասնակցող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ բժշկական կազմակերպություններ) մասնագետների համար:

5. Փակ տարածքներում դիմակ կրելը պարտադիր է բոլորի համար, բացառությամբ՝

1) երեխաների՝ 0-10 տարեկանը ներառյալ.

2) բնակչության վայրում (բնակելի տանը, բնակարանում).

3) Արցախի Հանրապետության Նախագահի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի Թեմի առաջնորդի, Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահի, Արցախի Հանրապետության պետական նախարարի, Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի, Բարձրագույն դատական խորհրդի նախագահի գլխավորությամբ անցկացվող արարողակարգային միջոցառումների ժամանակ ելույթ և ուղերձ ունեցողների և միջոցառման անմիջական մասնակիցների (բացառությամբ՝ լրագրողների և սպասարկող անձնակազմի).

4) անձնական ավտոտրանսպորտային միջոցներով երթևեկողների (բացի ոչ կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնելիս).

5) հեռուստահաղորդումների հեռարձակման ժամանակ սուրդոթարգմանություն իրականացնողների.

6) լսողության և խոսքի տարբեր աստիճանի խանգարումներ ունեցողների (որոնք շրթունքների շարժումներին հետևելով են ընկալում խոսքը) և նրանց հետ աշխատողների.

7) ծխելու, խմելու և սնվելու ժամանակ.

8) Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված սանիտարական կանոններով սահմանված այլ դեպքերի.

9) հեռուստահաղորդավարների՝ հեռուստահաղորդումների և հեռուստածրագրերի հեռարձակման ժամանակ հեռուստատեսային տաղավարում միայնակ գտնվելիս.

10) հոգեկան խանգարումներ և վարքի խանգարումներ ունեցող անձանց.

11) կոզմիտիվ խանգարումներ ունեցող անձանց.

12) դեմքի վնասվածք ունեցող կամ բերանի շրջանում դիմաձնտային միջամտության ենթարկված անձանց:

2. ԱՆՎՏԱՆԳ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6. Սույն պայմանների ապահովման պարտականությունն ամբողջ ծավալով կրում է գործատուն:

7. Գործատուն նշանակում է նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների պատասխանատուի (այսուհետ՝ Պատասխանատու):

8. Պատասխանատուն ապահովում է սույն պայմանների պահպանման նկատմամբ պատշաճ հսկողությունը և սույն պայմանների պահպանման համար անհրաժեշտ պարագաների, նյութերի ու հարմարությունների առկայությունը:

9. Գործատուն ապահովում է աշխատողների՝ անվտանգ վարվելականոնների և սանիտարահամաճարակային անվտանգության նորմերի վերաբերյալ պատշաճ իրազեկումը, այդ թվում՝ տեսանելի վայրերում պաստառներ փակցնելու և/կամ այլ նախընտրելի միջոցներով:

10. Բոլոր աշխատակիցները աշխատավայրում գտնվելու ընթացքում ապահովվում են անհրաժեշտ քանակի դիմակներով (առնվազն 3-4 ժամը մեկ փոխելու հաշվարկով) և ձեռքերի մշակման մաշկային հականեխիչների, ախտահանիչ միջոցների, անձեռոցիկների՝ առնվազն մեկ շաբաթվա պահուստային պաշարով:

11. Փակ տարածքներում անցանց հանդիպումները և ժողովներն իրականացվում են՝ պահպանելով մասնակիցների միջև առնվազն 1,5 մետր սոցիալական հեռավորություն:

12. Աշխատավայրի վարչական շենքի ընդհանուր մուտքը, շենքի առանձին հարկերը և հատվածները, գուգարանները և խոհանոցային հատվածը (առկայության դեպքում) ապահովվում են ախտահանիչ տարողություններով, անձեռոցիկներով և փակվող աղբարկղերով:

13. Ապահովվում են ձեռքերի լվացման հնարավորություններ՝ հոսող տաք և սառը ջրով, արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներով (դրա անհնարիության դեպքում՝ անմիջապես ախտահանման հնարավորությամբ), օձառով:

14. Յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափվում է օրական առնվազն 2 անգամ՝ հեռավար կամ անհատական ջերմաչափով (ապահովվելով անվտանգ գործելակարգ), որից մեկը՝ աշխատանքի ներկայանալու պահին կատարելով համապատասխան նշում գրանցամատյանում:

15. Բացառվում է սուր շնչառական վարակների ախտանշաններով (ջերմություն, հազ, հարբուխ, դժվարաշնչություն) աշխատողների մուտքը աշխատանքի վայր:

16. Աշխատասենյակում կամ սպասարկման գրասենյակի տարածքում աշխատատեղանների միջև ապահովվում է առնվազն 1,5 մետր հեռավորություն: Հնարավորության դեպքում՝ կիրառվում են աշխատատեղերը բաժանող միջնորմներ:

17. Աշխատատեղերը կահավորվում են փակվող աղբամաններով՝ առնվազն 2 աշխատողի հաշվով մեկ աղբաման հաշվարկով՝ օգտագործված դիմակները և անհատական պաշտպանության այլ պարագաները նետելու համար:

18. Ապահովվում է գրասենյակային տարածքի և/կամ առանձին սենյակների բնական օդափոխությունը 2 ժամը մեկ պարբերականությամբ:

19. Աշխատանքային օրվա ավարտին ախտահանվում են դռների բռնակները, բազրիքները, սեղանները, ձեռքով հաճախակի հպման մակերեսները (սարքերի մակերեսներ, լույսի անջատիչներ, սարքավորումների բռնակներ, հեռակառավարման վահանակներ, ընդհանուր օգտագործման հեռախոսներ, համակարգիչներ, ստեղնաշարեր և մկնիկներ և այլն), սանհանգույցները, հպման մակերեսները քլորի հիմքով կամ առնվազն 70 տոկոս սպիրտ պարունակող ախտահանիչ նյութերի կիրառմամբ՝ նյութին կից մեթոդական ուղեցույցին համապատասխան:

20. Ներգնա և արտագնա գործուղումները և աշխատանքային այցերը (հատկապես բազմամարդ միջոցառումների նպատակով) իրականացվում են սահմանափակ ծավալով՝ այլընտրանքի բացակայության, ոլորտի աշխատանքի ու գործընթացների բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով:

21. Բժշկական կազմակերպություններում բուժանձնակազմի կողմից բժշկական դիմակները ընտրվում և կիրառվում են՝ ելնելով վարակի փոխանցման ռիսկից, իրավիճակից և բուժանձնակազմի գործունեության հանգամանքից:

22. Բժշկական կազմակերպությունում ապահովվում է սանիտարահամաճարակային կանոնների պահպանումը և նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) կասկածելի կամ հաստատված անձանց խնամք և հսկողություն իրականացնող վայրերում նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) ժամանակ օգտագործվող անհատական պաշտպանության միջոցների կիրառման դեպքերը ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Կարգավորում	Թիրախային անձնակազմ կամ պացիենտ	Միջոցառումներ	ԱՊՄ տեսակը
Հիվանդանոցային բժշկական կազմակերպություն			
Հիվանդանայակ	Բուժանձնակազմ	COVID-19 պացիենտի անմիջական խնամք	1. Շնչադիմակ N95 կամ FFP2 ստանդարտ կամ համարժեք 2. Արտահագուստ 3. Ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց (ակնոց կամ դիմային վահանակ)
		COVID-19 պացիենտի աերոզոլային միջոցառումներ	1. Շնչադիմակ N95 կամ FFP2 ստանդարտ կամ համարժեք 2. Արտահագուստ 3. Ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց 5. Գոգնոց
	Մաքրող, ախտահանող անձնակազմ	COVID-19 պացիենտի հիվանդասենյակի մաքրում և ախտահանում	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ամուր ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց (եթե կա օրգանական կամ քիմիական նյութերի ցայտման ռիսկ) 5. Փակ աշխատանքային կոշիկ
	Այցելու	COVID-19 պացիենտի սենյակ մուտքի իրականացում	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5 մ
Պացիենտի տարանցման այլ վայրեր (օրինակ, պալատ, միջանցք)	Ամբողջ անձնակազմը, ներառյալ բուժաշխատողները	Ցանկացած գործողություն, որը կապ չունի COVID-19 պացիենտի հետ	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ
Տեսակավորում	Բուժանձնակազմ	Նախնական սկրինինգ՝ առանց ուղղակի շփման	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ 3. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5 մ
	Սուր շնչառական վարակիին բնորոշ ախտանշաններով պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5 մ
	Շնչառական ախտանշաններ չունեցող պացիենտ	Ցանկացած	Բժշկական դիմակ

Լաբորատորիա	Լաբորանտ	Գործողություններ շնչառական նմուշների հետ	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց (եթե կա ցայտման ռիսկ)
Վարչական տարածքներ	Ամբողջ անձնակազմը, ներառյալ բուժաշխատողները	Վարչական առաջադրանքներ, որոնք կապ չունեն COVID-19 պացիենտի հետ	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ (բուժաշխատողները)
Առողջության առաջնային պահպանման կազմակերպություն			
Խորհրդատվության սենյակ	Բուժաշխատողներ	Ֆիզիկական զննում շնչառական ախտանշանով պացիենտին	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց
	Բուժաշխատողներ	Ֆիզիկական զննում առանց շնչառական ախտանշանի պացիենտին	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ 3. Նախազգուշական միջոցառումներ և ռիսկերի գնահատում
	Շնչառական ախտանշաններ ունեցող պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ, եթե տանելի է
	Շնչառական ախտանշաններ չունեցող պացիենտ	Ցանկացած	Բժշկական դիմակ
	Մաքրող անձնակազմ	Շնչառական ախտանշանով պացիենտների հետ խորհրդատվությունների միջև և դրանից հետո	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ամուր ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց (եթե կա օրգանական կամ քիմիական նյութերի ցայտման ռիսկ) 5. Ճտքակոշիկ կամ փակ աշխատանքային կոշիկ
Սպասարահ	Շնչառական ախտանշաններ ունեցող պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Անմիջապես տեղափոխում պացիենտին մեկուսացման սենյակ կամ առանձին տարածք, իսկ անհնարինության դեպքում՝ այլ պացիենտներից առնվազն 1,5մ հեռավորության ապահովում
	Շնչառական ախտանշաններ չունեցող պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ
Վարչական տարածք	Ամբողջ անձնակազմը, ներառյալ բուժաշխատողները	Վարչական խնդիրներ	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ (բուժաշխատողներ)
Տեսակավորում	Բուժաշխատողներ	Նախնական սկրինինգ առանց ուղղակի շփման	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ 3. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5 մ
	Շնչառական ախտանշաններով	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5 մ

	պացիենտ		
	Շնչառական ախտանշաններ չունեցող պացիենտ	Ցանկացած	Բժշկական դիմակ
Բնակության վայր, որտեղ իրականացվում է COVID-19 պացիենտի խնամք			
Տուն	Շնչառական ախտանշաններով պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5 մ
	Խնամակալ	Պացիենտի սենյակ մուտք գործող, եթե չի ցուցաբերում ուղղակի խնամք կամ օգնություն	1. Շնչադիմակ N95 կամ FFP2 ստանդարտ կամ համարժեք
	Խնամակալ	COVID-19 պացիենտին ցուցաբերում է ուղղակի խնամք, կամ իրականացնում է աթոռակի, մեզի կամ թափոնների մշակում	1. Շնչադիմակ N95 կամ FFP2 ստանդարտ կամ համարժեք 2. Ձեռնոց 3. Գոգնոց (եթե կա ցայտման ռիսկ)
	Բուժաշխատող	COVID-19 պացիենտին տանն ուղղակի խնամքի կամ օգնության տրամադրում	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց
Մուտքի կետեր			
Վարչական տարածքներ	Ամբողջ անձնակազմը	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ (բուժաշխատողները)
Սկրինինգի տարածք	Անձնակազմ	Առաջին սկրինինգ (ջերմաչափում)՝ առանց ուղղակի շփման	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ (բուժաշխատողները) 3. Ձեռնոցներ 4. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5 մ
	Անձնակազմ	Երկրորդ սկրինինգ (այսինքն՝ հարցազրույց ուղևորների հետ ջերմության կլինիկական ախտանշանների վերաբերյալ և ճամփորդության պատմության ճշտում)	1. Բժշկական դիմակ 2. Ձեռնոց
	Մաքրող անձնակազմ	Տարածքի մաքրում, որտեղ տենդով ուղևորներ են հայտնաբերվում	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ամուր ձեռնոցներ 4. Աչքի պաշտպանության միջոց (եթե կա օրգանական կամ քիմիական նյութերի ցայտման ռիսկ) ճտքակոշիկ կամ փակ աշխատանքային կոշիկ
Ժամանա-	Անձնակազմ	Մուտք	1. Բժշկական դիմակ

կավոր մեկուսացման տարածք		մեկուսացման տարածք՝ առանց ուղղակի օգնության ցուցաբերման	2. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5 մ
	Անձնակազմ, բուժաշխատող	Պացիենտին բժշկական կազմակերպություն տեղափոխելիս	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց
	Մաքրող անձնակազմ	Մեկուսացման տարածքի մաքրում	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ամուր ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց (եթե կա օրգանական կամ քիմիական նյութերի ցայտման ռիսկ), ճտքակոշիկ կամ փակ աշխատանքային կոշիկ
Շտապօգնության մեքենա կամ տեղափոխող փոխադրամիջոց	Բուժաշխատողներ	COVID-19 կասկածելի պացիենտի տեղափոխում բժշկական կազմակերպություն	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց
	Վարորդներ	Եթե միայն վարում է մեքենան COVID-19 կասկածելի պացիենտին տեղափոխելու ժամանակ, վարորդի խցիկն առանձնացված է COVID-19 պացիենտից	Բժշկական դիմակ
		Օգնում է COVID-19 կասկածելի պացիենտին մեքենա նստեցնել-իջեցնելիս	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց
		Ուղիղ շփում չկա COVID-19 կասկածելի պացիենտի հետ, սակայն վարորդի և պացիենտի խցիկներն առանձնացված չեն	1. Բժշկական դիմակ 2. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5 մ
	COVID-19 հիվանդության կասկածով պացիենտ	Ուղեգրում և փոխադրում դեպի բժշկական կազմակերպություն	Բժշկական դիմակ, եթե տանելի է
	Մաքրում	Մաքրում COVID-19 հիվանդության կասկածով պացիենտների բժշկական կազմակերպություն տեղափոխումից հետո	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ամուր ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց (եթե կա օրգանական կամ քիմիական նյութերի ցայտման ռիսկ) 5. Ճտքակոշիկ կամ փակ աշխատանքային կոշիկ

23. Անհատական պաշտպանության միջոցների օգտագործումը հիմնվում է ռիսկի ազդեցության մակարդակի և հարուցչի փոխանցման շարժընթացի վրա: Տարբեր սցենարների համար անհատական պաշտպանության միջոցների սահմանված նվազագույն քանակը նոր կորոնավիրուսային վարակով (COVID-19) պացիենտներին

բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու ժամանակ ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Բուժանձնակազմ	Կասկածելի դեպք	Հաստատված դեպք թեթև ախտանշանով	Հաստատված դեպք ծանր ախտանշանով
	Հավաքածուների քանակը մեկ պացիենտի համար	Օրական մեկ պացիենտի համար սահմանված քանակը	
Բուժքույր	1-2	6	6-12
Բժիշկ	1	2-3	3-6
Մաքրում և ախտահանում իրականացնող անձնակազմ	1	3	3
Այլ ծառայություններ մատուցող	0-2	3	3
Ընդհանուր	3-6	14-15	15-24

3. ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

24. Հնարավորության դեպքում քաղաքացիների ընդունելությունն ապահովվում է ըստ նախնական էլեկտրոնային կամ հեռախոսային հերթագրման:

25. Հնարավորության դեպքում կենսաթոշակային տարիքի անձանց պետք է սպասարկել առանձին՝ բացառելով շփումը այլ անձանց հետ:

26. Արգելվում է սպասարկման գրասենյակներ հաճախորդների մուտքն առանց դիմակների:

27. Յուրաքանչյուր այցելուի ջերմաչափումն իրականացվում է հեռավար ջերմաչափով:

28. Բացառվում է սուր շնչառական վարակների ախտանշաններով՝ ջերմություն, հազ, հարբուխ, դժվարաշնչություն ունեցող այցելուների մուտքը տարածք և անհապաղ ահազանգ է կատարվում Արցախի Հանրապետության առողջապահության նախարարություն:

29. Մարդկանց կուտակումները բացառելու համար անհրաժեշտ է իրականացնել մարդկանց հոսքի կառավարմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ ապահովել սոցիալական հեռավորության պահպանմամբ հերթերի կառավարում տարածքի արտաքին հատվածում՝ մուտքերի մոտ, թույլ չտալ մուտքը տարածք՝ մինչև ներսում գտնվող մարդկանց որոշակի քանակի դուրս գալը:

30. Վճարման տերմինալների, սպասարկման տաղավարների մոտ նույնպես առնվազն իրարից 1,5 մետր հեռավորությամբ անհրաժեշտ է իրականացնել գծանշում՝ հերթերը բացառելու և սոցիալական հեռավորությունն ապահովելու նպատակով: Վճարման տերմինալներին անմիջական հարևանությամբ տեղադրվում է սպիրտային հիմքով ախտահանիչով լցված տարա, անձեռոցիկ և կափարիչը փակվող աղբարկղ՝ տերմինալից օգտվելուց անմիջապես հետո ձեռքերն ախտահանելու համար:

4. ԶԱՆԳՎԱԾՍՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

31. Զանգվածային միջոցառումներն անցկացվում են սույն պայմանների պահպանմամբ:

32. Փակ տարածքներում միջոցառումներն անցկացվում են առավելագույնը 120 հոգու մասնակցությամբ:

33. Միջոցառումների անցկացման համար սույն պայմանների պահպանման պատասխանատուն միջոցառման կազմակերպիչն է:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

34. Ուսումնական հաստատություններում առողջ և անվտանգ պայմաններ ապահովելու պարտականությունն ամբողջ ծավալով կրում է ուսումնական հաստատության ղեկավարը (տնօրեն, ռեկտոր):

35. Ուսումնական հաստատություններում բացառվում են մարդկային կուտակում ենթադրող միջոցառումները, այդ թվում՝ անձանց հավաքների և ժողովների անցկացումը:

36. Ուսումնական հաստատություն հաճախողների ընդունումը և ճանապարհումն իրականացվում է հերթի կառավարմամբ (օրինակ՝ կարող են սահմանվել հաճախողներ՝ ուսումնական հաստատություն գալու և գնալու ժամային միջակայքեր)՝ պահպանելով մարդկանց միջև 1,5 մետր սոցիալական հեռավորություն:

37. Աշխատանքային որոշակի դադար ունենալու դեպքում՝ նախադպրոցական կրթական հաստատությունները վերաբացելուց մեկ օր առաջ, իսկ այնուհետև՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտից հետո իրականացվում են ընդհանուր մաքրման և ախտահանման աշխատանքներ հաստատության ամբողջ տարածքում, ներառյալ, այդպիսին լինելու դեպքում, բակային տարածքի խաղահրապարակը և գույքը՝ կիրառելով առնվազն 70 տոկոս սպիրտ պարունակող ախտահանիչ նյութեր:

38. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ննջասենյակներում կամ քնելու համար առանձնացված տարածքներում ախտահանումն իրականացվում է քնելուց առաջ, խաղասենյակներում կամ խմբասենյակներում՝ քնի ժամի ընթացքում: Ճաշելուց հետո տարածքը ախտահանվում է, այդ թվում՝ սեղանները, բռնակները, ծորակները և այն ամենն, ինչին երեխաները կարող են ձեռք տալ:

39. Ուսումնական հաստատություններում իրականացվում է տարածքների (խմբասենյակ, ճաշասենյակ, ննջասենյակ, սանհանգույց և այլն) օդափոխում 2 ժամը մեկ:

40. Մուտքի մոտ ապահովվում են առնվազն 70 տոկոս սպիրտ պարունակող ախտահանիչ նյութերով տարաներ՝ յուրաքանչյուր մտնող անձի ձեռքերի պարտադիր ախտահանման համար:

41. Ուսումնական հաստատության մուտքի մոտ, սանհանգույցներում և հաստատության տարածքում տեղադրվում են փակվող աղբամաններ՝ օգտագործված դիմակները և անհատական պաշտպանության այլ պարագաները նետելու համար:

42. Ժամանակավորապես առօրյա գործածությունից դուրս են բերվում այն խաղալիքները, իրերը և մարզագույքը, որոնց ամենօրյա ախտահանում հնարավոր չէ իրականացնել: Խաղալիքները հավաքվում են առանձին տարաներում, և նախքան հետագա օգտագործումը դրանք պարտադիր ախտահանվում են:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ № 2-Ն

**ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 20-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 38-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 14-ի «Դատական կարգադրիչների ծառայության հաստիքների քանակը և պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 20-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Հավելվածի 4-րդ կետի «Պաշտոնների ենթախումբը» սյունակի «Երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

01 հոկտեմբերի 2021թ.
ք. Ստեփանակերտ